ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁ

ԱՐԱՐԱՏ ԽՈՇՈՐԱՑՎԱԾ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՍԼԱՆ ԱՎԵՏԻՍՅԱՆԻ՝ ՄԱՅԻՍԻ 1-Ի ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Սիրելի՛ Արարատ համայնքի բնակիչներ,
Սրտանց շնորհավորում եմ ձեզ Աշխատանքի օրվա՝ Մայիսի 1-ի կապակցությամբ:

Գարնանային այս օրը՝ Մայիսի 1-ը նրանց տոնն է, ովքեր իրենց աշխատանքով բարեկեցություն են ստեղծում իրենց տան, ընտանիքի և մեր հայրենիքի համար: Օրվա առթիվ ուզում եմ հատկապես իմ խորին երախտագիտությունը հայտնել բոլոր նրանց, ովքեր իրենց նվիրվածությամբ, մեջք մեջքի տալով, միահամուռ կերպով համայնքապետարանի հետ միասին ջանք ու եռանդ չեն խնայում մեր համայնքը օր օրի զարգացնելու և շենացնելու ճանապարհին:

Այսօր մենք մեր բոլոր ջանքերը պետք է ներդնենք մեր երկրում, մեր համայնքում արժանապատիվ աշխատանքի, արժանապատիվ վաստակի հնարավորությունները մեծացնելու և մեր ժողովրդի բարօրությունն ապահովելու համար նոր պայմաններ ստեղծելու գործին:

Եվս մեկ անգամ շնորհավորելով այս գեղեցիկ օրվա առթիվ՝ մաղթում եմ բոլորիս աշխատանքային ու ստեղծագործական անսպառ հաջողություններ՝ հանու՛ն մեր ընտանիքների բարօրության և հանու՛ն մեր երկրի անվտանգ ապագայի:

Շնորհավոր Մայիսի 1-ը

Խաղաղ և ստեղծարար աշխատանք բոլորիս...

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՍԼԱՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ